

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 30(4)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ընդարձակ նիստի

ք. Երևան

28 հոկտեմբերի 2009 թվականի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ  
Վ. Դանիելյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ  
Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերով քարտուղարության պետ, խորհրդի քարտուղար  
Յ. Շուքուրյան - ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս  
Գ. Չուգասոյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ  
Ա. Վարդանյան - «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն  
Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն  
Ա. Բաղդրյան - «Յունիքոմֆ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն  
Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ  
Հ. Մուսայելյան - «Մինոֆսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն  
Ռ. Աղզաշյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր  
Հ. Ավոյան - «Սոբսիո» ՓԲԸ-ի տնօրեն  
Ա. Խաչատրյան - «Ֆայբրնետ քոմյունիքեյշն» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն  
Ա. Կարապետյան - «Սոֆտլայն Ինտերնեշնլ Արմենիա»-ի տնօրեն  
Բ. Դյուրոսա - «Օրանժ Արմենիա» գլխավոր տնօրեն

Հրավիրվածներ՝

- Դ. Սարգսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Ն. Երիցյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարար
- Ս. Ղոնադյան - ՀՀ Կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Գ. Առաքելյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Շ. Ալեքսանյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Մ. Քուշքյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Ա. Անանյան - ՀՀ վարչապետի օգնական
- Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
- Ա. Գրիգորյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեղեկատվական հասարակության ձևավորման և Էլեկտրոնային կառավարման վարչության պետ
- Ա. Գրիգորյան - Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն
- Գ. Սաղոյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետ
- Մ. Փաշայան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՏՏ վարչության պետ
- Վ. Հովհաննիսյան - «Օրանժ Արմենիա» Ծրագրի կորդինատոր
- Ա. Ղազարյան - CAPS ծրագրի տնօրեն
- Ա. Աբրահամյան - CAPS ծրագրի ՏՏ կլաստերի համակարգող
- Լ. Եղիազարյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Հայրիյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստերի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան

ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյան  
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն Ա. Գրիգորյան  
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային վերահսկողության վարչության պետ Գ. Սաղոյան  
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՏՏ վարչության պետ Մ. Փաշայան  
«Երևանի մաթեմատիկական մեթենանների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժիներ Ա. Քուչուկյան

2. Նոյեմբերի 5-ից 8-ը Ամերիկայի Միացիալ Նահանգների Ման Հոսե քաղաքում նախատեսվող «ԱրմԹեք 09» համաժողովին մասին

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան

3. Այլ Հարցեր

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստերի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----

-----

(Տ. Սարգսյան, Ա. Գրիգորյան, Գ. Սաղոյան, Ա. Վարդանյան, Ն. Երիցյան, Ա. Ավետիսյան, Ա. Գրիգորյան, Ա. Քուչուկյան, Մ. Փաշայան )

1. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 28(2) արձանագրության 3-րդ կետի բ. ենթակետի հանձնարարականի` «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին, պատրաստել ներքին կարգադրություն, որ այսուհետ ՀՀ օրենքով չնախատեսված ապրանքների համար մաքսակետերում սերտիֆիկատ չպահանջվի:»

ա. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետ Գ. Սաղոյան տեղեկացրեց, որ համաձայն ՏՏՁԱ Խորհրդի հանձնարարականի բոլոր մաքսակետերում իրականացվել է ուսումնասիրություն և այսօրվա դրությամբ, որևէ անհարգի կամ անպատեհ առիթով որևէ սերտիֆիկատ կամ հավաստագիր չի պահանջվում, այդ հարցը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի խիստ հսկողության տակ է:

բ. Տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Մասնավորապես` ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ բիզնես իրականացնող ընկերությունները ահագանգում են, որ չնայած այն հանգամանքին, որ օրենքով արգելված է սահմանին սերտիֆիկատ կամ հավաստագրի պահանջել, միևնույն է այդ պրակտիկան շարունակվում է:

գ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պրն. Դավիթ Սարգսյանին պատրաստել հանձնարարական` ուղղված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին` հանձնարարելով իրականացնել համապատասխան միջոցառումներ բացառելու համար մաքսակետերում անհարգի կամ անպատեհ առիթով որևէ սերտիֆիկատ կամ

հավաստագիր պահանջելը:

2. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 28(2) արձանագրության 4-րդ կետի գ. ենթակետի հանձնարարականի «ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ «Start up» ընկերություններին աջակցություն ցուցաբերելու համար առաջարկներ հավաքագրելու և ՏՏԱ Խորհրդին ներկայացնելու նպատակով:»

ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ աշխատանքային խումբը ստեղծվել է, և տարբեր կազմակերպությունների հետ իրականացվում են քննարկումները, ստեղծվել է կոնցեպցիա, որը առաջիկայում կդրվի շրջանառության մեջ:

բ. Ընդունվեց ի գիտություն:

3. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 28(2) արձանագրության 8-րդ կետի բ. ենթակետի ՏՏԱ Խորհրդի Ռազմավարական աշխատանքային խմբի ղեկավար պրն. Քուչուկյանին հանձնարարվել էր հանգամանալից ուսումնասիրել և ՏՏԱ Խորհրդի առաջիկա նիստում ներկայացնել առաջնահերթությունների ծրագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն:

ա. Պարոն Ա. Քուչուկյանը հակիրճ տեղեկատվություն ներկայացրեց, մասնավորապես տեղեկացրեց, որ առաջնահերթությունների ցանկում նախատեսված գործողություններից բավական աշխատանք կատարվել է, բայց, հետընթաց քայլ չկատարվելու մտավախությամբ, նա առաջարկեց ՀՀ կառավարության կողմից հաստատել առաջնահերթությունների ցանկը և ՀՀ Վարչապետի գլխավորությամբ ստեղծել աշխատանքային հանձնաժողով, որը կկոորդինացնի ցանկով նախատեսված աշխատանքների ընթացքը:

բ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը հանձնարարեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պրն. Դավիթ Սարգսյանին պատրաստել որոշումներ՝ հանձնաժողովի ստեղծման և առաջնահերթ միջոցառումների ցանկի հաստատման համար:

4. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 28(2) արձանագրության 9-րդ կետի դ. ենթակետի հանձնարարականի՝ «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին ՏՏ համայնքի մաքսային գործառույթների մեջ անհանգստացնող խնդիրները քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով առաջարկվել էր ստեղծել աշխատանքային խումբ՝ ՏՏ համայնքի և մաքսային կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ»: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՏՏ վարչության պետ Մ. Փաշայանը տեղեկացրեց, որ աշխատանքային խումբը ստեղծված է և առաջին հանդիպումը արդեն տեղի է ունեցել, որոշվել է այսուհետև հանդիպել շաբաթական մեկ անգամ մինչև բոլոր հարցերի շուրջ վերջնական համաձայնությունների կայացումը:

5. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի 28(2) արձանագրության 12-րդ կետի գ. ենթակետում ներկայացված՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին տրված հանձնարարականի, «ՀՀ կրթության և գիտության նախարարին «մեկ շաբաթվա ընթացքում ՀՀ կառավարությանը ներկայացնել ՀՀ կառավարության որոշման նախագիծ «ՀՀ համակարգչային գրագիտության բարձրացման մասին»».

ա. ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանը տեղեկատվություն ներկայացրեց, մասնավորապես տեղեկացրեց, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից ստեղծվել է հանձնաժողով, ընդգրկելով հանրապետության բոլոր շահագրգիռ և կարող օղակներից մարդկանց, քննարկումներ են ծավալվել:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց ԿՏԱԿ-ի տնօրեն Արեգ Գրիգորյանը. նա, մասնավորապես, տեղեկացրեց, որ «Ուսում 1» համակարգը արդեն փորձական տասը դպրոցներում տեղադրվել է, այժմ, հաշվի առնելով որոշ առաջարկություններ, «Երևանի մաթեմատիկական մեթենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից մշակվում է «Ուսում 2» համակարգը, որի ստեղծման ավարտին՝ այն կտեղադրվի տասը դպրոցներում, երեք ամիսների ընթացքում կկատարվեն ուսումնասիրություններ, որից հետո կմշակվի մեթոդաբանություն, որը կառաջարկվի կիրառել հանրապետության բոլոր դպրոցներում: Նախնական գնահատականով առաջարկությունը կձևավորվի 2010 թվականի մարտ ամսին:

բ. Տեղի ունեցան մտքերի փոխանակություններ:

6. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏՁԱԽ) նիստի 29(3) արձանագրության 2-րդ կետի բ. ենթակետի՝ հանձնարարվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարին «Երկու շաբաթվա ընթացքում ստեղծել գործողությունների ծրագիր, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավորությամբ, Հեռահաղորդակցության հիմնախնդիրների իրականացման համար միջոցառումների ժամանակացույց ստեղծելու նպատակով».

ա. Հարցի վերաբերյալ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ աշխատանքները սկսվել են, պատրաստ է գործողությունների ծրագրի անգլերեն տարբերակը, շուտով այն կթարգմանվի և կներկայացվի խորհրդի անդամներին:

բ. Ընդունվեց ի գիտություն:

7. Ի կատարումն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏՁԱԽ) նիստի 29(3) արձանագրության 4-րդ կետի բ. ենթակետի հանձնարարվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ, որը, համագործակցելով Խորհրդի Գիտակրթական աշխատանքային խմբի հետ, կքննարկի ձևավորված առաջարկները և անհրաժեշտության դեպքում կներկայացնի միջոցառումների ծրագիր՝ դրանք իրականացնելու համար:

ա. Հարցի վերաբերյալ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ աշխատանքները խմբի ստեղծման գործընթացը ընթացքի մեջ է և մեկ շաբաթից աշխատանքային

խումբը կսկսի իր աշխատանքները:

բ. Ընդունվեց ի գիտություն:

2. Նոյեմբերի 5-ից 8-ը Ամերիկայի Միացիալ Նահանգների Սան Հոսե քաղաքում նախատեսվող  
«ԱրմԹեք 09» համաժողովին մասին

---

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Ա. Գրիգորյան, Ա. Վարդանյան, Գ. Չուգասցյան, Հ. Մուսայելյան, Ա.  
Բալդրյան, Հ. Ավոյան, Ա. Ավետիսյան, Ա. Քուչուկյան)

8. ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ «ԱրմԹեք 09» համաժողովում  
նախատեսվում է առաջարկել, որպեսզի մենք կենտրոնանանք յոթ հիմնական սկզբունքների  
ապահովման վրա, որը կխթանի երկրի զարգացմանը`

1. «Գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության  
զարգացման հիմնաքարն է»`
  - Ջարգացնել կառավարություն, բիզնես, գիտություն համագործակցության միջոցով
  - Օգտագործել սփյուռքի մտավոր և ձեռնարկատիրական ներուժը
2. Շեշտը դնել կրթական համակարգի բարեփոխման վրա` տարական դպրոցներից մինչև  
բարձրագույն ուսումնական հաստատություններ
  - Հիմնականում կենտրոնանալ այն ծրագրերի վրա, որոնք համապատասխանում են  
գործարարության կարիքներին
3. Բարելավել գործարարության և ֆինանսական ենթակառույցները
4. Ապահովել բարձրորակ ինտերնետ հասանելիություն
  - Ինտերնետային մալուխների անցկացումը հնարավոր ամենաուղիղ ճանապարհով
5. Հայաստանի Հանրապետության մարզերի հավասարապես զարգացում
  - Մասնավորապես Գյումրի քաղաքի զարգացում
6. ՀՀ Կառավարական կառույցների գործունեության բարելավում, թափանցիկության  
ապահովում

- Մասնավորապես գործունեությունը

Պետական

եկամուտների

կոմիտեի

7. Հետևողական և ժամանակին ՀՀ օրենքների կիրառման ապահովում

բ. Տեղի ունեցած մտքերի փոխանակումներ, արվեցին առաջարկներ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ.

ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

ԳՐԻԳՈՐՅԱՆ